ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9 հունիսի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Քնարիկ Աշոտի Բաբաջանյանի, Վլադիմիր Գեորգիի Դավթյանի, Ռիմա Ավետիքի Գևորգյանի, Մարինե Գևորգի Ավետիսյանի, Լուսինե Վարդանի Բաղրամյանի, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանի, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանի, Աննա Սերյոժայի Միքայելյանի, Աննա Էդուարդի Կուրղինյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին» թիվ ՎԴ/3219/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Քնարիկ Աշոտի Բաբաջանյանը, Վլադիմիր Գեորգիի Դավթյանը, Ռիմա Ավետիքի Գևորգյանը, Մարինե Գևորգի Ավետիսյանը, Լուսինե Վարդանի Բաղրամյանը, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանը, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանը, Աննա Սերյոժայի Միքայելյանը,

Աննա Էդուարդի Կուրղինյանը 2023 թվականի ապրիլի 27-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի՝ «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի փետրվարի 6-ի թիվ 307-Ա որոշումը՝ ««Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասով, անվավեր ճանաչելու, որպես հետևանք, այդ մասով այդ որոշման հավելվածը վերացնելու, որպես հետևանք՝ համահայցվորների հետ աշխատանքային պայմանագրերը լուծելու մասին՝ 2023 թվականի մարտի 30-ի թիվ 2023/Ա-30/03-2 (Քնարիկ Բաբաջանյան), 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 2023/Ա-13/04-2 (Վլադիմիր Դավթյան), 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 2023/Ա-13/04-1 (Ռիմա Գևորգյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-4 (Մարինե Ավետիսյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-3 (Լուսինե Բաղրամյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-2 (Էլմիաննա Հեքեքյան), 2023 թվականի մարտի 9-ի թիվ 2023/Ա-09/03-1 (Գևորգ Գրիգորյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-1 (Աննա Միքայելյան), 2023 թվականի մարտի 30-ի թիվ 2023/Ա-30/03-1 և 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 2023/Ա-22/04-2 (Աննա Կուրղինյան) հրամաններն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 3-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի մայիսի 30-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի հունիսի 2-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 77-րդ, 81-րդ հոդվածներին,

126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԴ/0830/05/14 գործով 2016 թվականի ապրիլի 24-ին արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի մայիսի 3-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Հ]աշվի առնելով այն փաստը, որ սույն հայցադիմումով հայցվորների հիմնական պահանջը վերաբերում է ««Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասով՝ «Երևանի քաղաքապետարանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 06.02.2023 թվականի թիվ 307-Ա որոշումն անվավեր ճանաչելուն, մինչդեռ, նշված որոշումը չի ընդունվել հանրային շահի իրացման կապակցությամբ, քանի որ դրանով ծագած իրավահարաբերությունն ուղղված չէ հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, այլ ուղղված է մասնավոր իրավահարաբերության, մասնավորապես՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության իրականացմանն ուղղված հաստիքացուցակները և պաշտոնային դրուքաչափերը սահմանելու, որի արդյունքում դադարել են նաև հայցվորների մասնավոր իրավահարաբերություն հանդիսացող աշխատանքային հարաբերություններն այդ կազմակերպության հետ՝ Դատարանը փաստում է, որ այդ պայմաններում վեճը հանդիսանում է քաղաքացիաիրավական (մասնավոր) հարաբերությունների շրջանակում ծագած, ուստի հայցն ընդդատյա չէ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի քննությանը (…)»*[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության

[1] Տե՛ս, գործը, թերթեր 1-5:

օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասին, 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետին, ՀՀ Սահմանադրական դատարանի 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2022 թվականի մայիսի 15-ի թիվ ԵԴ/38635/02/19 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի մայիսի 30-ի որոշմամբ գտել է, որ. «*(…) Դատարանն արձանագրում է հետևյալը՝*

1. Երևանի քաղաքապետարանը պետական մարմին է,

2. Պատասխանողը և Երրորդ անձը, որտեղ, ըստ հայցադիմումի, աշխատել են Համահայցվորները, գտնվում են Պատասխանողի ենթակայության տակ,

3. նշված կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշումներ ընդունելու լիազորությունը վերապահված է Պատասխանողին,

4. Ըստ Համահայցվորների՝ Որոշման ընդունմամբ խախտվել են իրենց իրավունքները,

5. Օրենքի 52-րդ հոդվածով նախատեսված լիազորությունների իրականացումը, որպես պետական մարմնի լիազորություն, ուղղված է ծառայելու հանրային կամ ընդհանուր շահին,

6. Օրենքի 52-րդ հոդվածը կարգավորում է հանրային իշխանություն կրողի՝ Պատասխանողի գործողությունները,

7. վեճի լուծման հիմքում Համահայցվորները դրվել են նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված վարչական վարույթի ընթացքում փաստաթղթերին ծանոթանալու և տեղական ինքնակառավարման մարմնի կողմից լսված չլինելու գործառույթների իրականացրած չլինելը, Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետը:

Նշված համակարգային վերլուծությունների արդյունքում հաստատված փաստերի առկայության պայմաններում Դատարանը եզրահանգում է, որ սույն հայցադիմումով

ներկայացված հիմնական պահանջը վերապահված է քննության ՀՀ վարչական դատարանին»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3219/05/23 գործն ըստ հայցի՝ Քնարիկ Աշոտի Բաբաջանյանի, Վլադիմիր Գեորգիի Դավթյանի, Ռիմա Ավետիքի Գևորգյանի, Մարինե Գևորգի Ավետիսյանի, Լուսինե Վարդանի Բաղրամյանի, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանի, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանի, Աննա Սերյոժայի Միքայելյանի, Աննա Էդուարդի Կուրղինյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին», ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

---

[2] Տե՛ս, գործը, թերթեր 137-142:

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝*«(...) քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունների մասնակիցները՝ ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա պետությունների քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիներ) ու իրավաբանական անձինք են, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը և համայնքներն են (...)»:*

Նույն օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով»:*

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են սույն օրենքով և այլ օրենքներով»*:

Նույն օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետի համաձայն՝ «*Քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ որոշում է ընդունում Երևանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ»*:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել ՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական

գործով՝ 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում՝ պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերի քննությունը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ենթակայության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Բացի այդ, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար, անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը: Ուստի, միայն իրավահարաբերության կողմերից մեկի՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ՝ տվյալ իրավահարաբերությունը հանրային որակելու համար, քանի որ պետությունը կամ համայնքը՝ ի դեմս իրավասու վարչական մարմնի, կարող են ներգրավվել նաև մասնավոր հարաբերություններում: Վերջիններս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով կարող են մասնակցել քաղաքացիական իրավահարաբերություններին, իրենց իրավասության սահմաններում ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և պարտականություններ:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Քնարիկ Աշոտի Բաբաջանյանը, Վլադիմիր Գեորգիի Դավթյանը, Ռիմա Ավետիքի Գևորգյանը, Մարինե Գևորգի Ավետիսյանը, Լուսինե Վարդանի Բաղրամյանը, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանը, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանը, Աննա Սերյոժայի Միքայելյանը, Աննա Էդուարդի Կուրղինյանը 2023 թվականի ապրիլի 27-ին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 2023 թվականի փետրվարի 6-ի թիվ 307-Ա որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին[4],

- ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի մայիսի 3-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ 2023 թվականի փետրվարի 6-ի՝ «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 307-Ա որոշումը չի ընդունվել հանրային շահի իրացման կապակցությամբ, քանի որ դրանով ծագած իրավահարաբերությունն ուղղված չէ հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը, այլ

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

ուղղված է մասնավոր իրավահարաբերության, մասնավորապես՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության իրականացմանն ուղղված հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը սահմանելուն, որի արդյունքում դադարել են այդ կազմակերպության հետ հայցվորների մասնավոր իրավահարաբերություն հանդիսացող աշխատանքային հարաբերությունները: Նման պայմաններում վեճը հանդիսանում է քաղաքացիաիրավական (մասնավոր) հարաբերությունների շրջանակում ծագած, ուստի հայցն ընդդատյա չէ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի քննությանը[5],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ սույն հայցադիմումով ներկայացված հիմնական պահանջը վերապահված է ՀՀ վարչական դատարանի քննությանը[6]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է փաստել, որ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետը 2023 թվականի փետրվարի 6-ի՝ «Երևանի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 307-Ա որոշմամբ հաստատել է, ի թիվս այլնի, «Հայաստանի փոքրիկ երգիչներ մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, որի հիման վրա կայացվել են հայցվորների հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին՝ 2023 թվականի մարտի 30-ի թիվ 2023/Ա-30/03-2 (Քնարիկ Աշոտի Բաբաջանյան), 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 2023/Ա-13/04-2 (Վլադիմիր Գեորգիի Դավթյան), 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 2023/Ա-13/04-1 (Ռիմա Ավետիքի Գևորգյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-4 (Մարինե Գևորգի Ավետիսյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-3 (Լուսինե Վարդանի Բաղրամյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-2 (Էլմիաննա Արտյոմի Հեքեքյան), 2023 թվականի մարտի 9-ի թիվ 2023/Ա-09/03-1 (Գևորգ Խաչատուրի Գրիգորյան), 2023 թվականի ապրիլի 5-ի թիվ 2023/Ա-05/04-1

[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

(Աննա Սերյոժայի Միքայելյան), 2023 թվականի մարտի 30-ի թիվ 2023/Ա-30/03-1 և 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 2023/Ա-22/04-2 (Աննա Էդուարդի Կուրղինյան) հրամանները:

Գործում առկա փաստական հանգամանքների և վերոգրյալ իրավական վերլուծությունների համատեքստում հարկ է նշել, որ հայցվորների և պատասխանողի միջև ծագած իրավահարաբերությունները կրում են քաղաքացիաիրավական բնույթ, քանի որ իրավունքի մասին վեճը ծագել է քաղաքացիական իրավունքի սուբյեկտների՝ ֆիզիկական անձ հայցվորների և համայնքի միջև՝ իրենց քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն իրացնելու կապակցությամբ: Վարչական մարմինը՝ Երևանի քաղաքապետարանը, Երևանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս հանդես չի գալիս որպես հանրային իշխանական լիազորություններ իրականացնող մարմին: Նշված իրավազորության իրականացումը կապված չէ վերջինիս հանրային-իշխանական (գործադիր-կարգադրիչ) գործառույթների իրականացման հետ: Տվյալ պայմաններում վարչական մարմնի կողմից վերը նշված որոշման կայացումն ուղղված է ոչ թե հանրային շահի իրացմանը, այլ քաղաքացիաիրավական (մասնավոր) հարաբերությունների կարգավորմանը:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ թեև խնդրո առարկա իրավահարաբերությանը մասնակցում է հանրային իշխանության սուբյեկտ հանդիսացող վարչական մարմինը, այդուհանդերձ, այդ հարաբերություններում վերջինս չունի օրենքով սահմանված իշխանական լիազորություններ իրականացնելու պարտականություն, այլ իրացնում է համայնքի՝ որպես քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ քաղաքացիաիրավական բնույթի իրավունքներն ու պարտականությունները:

13. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/3219/05/23 գործն ըստ հայցի՝ Քնարիկ Աշոտի Բաբաջանյանի, Վլադիմիր Գեորգիի Դավթյանի, Ռիմա Ավետիքի Գևորգյանի, Մարինե Գևորգի Ավետիսյանի, Լուսինե Վարդանի Բաղրամյանի, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանի, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանի, Աննա Սերյոժայի Միքայելյանի, Աննա Էդուարդի Կուրղինյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին», ենթակա չէ Երևան քաղաքի առաջին

ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը, հիմնավոր չէ:

14. Վերոգրյալի հիման վրա՝ գտնում եմ, որ Քնարիկ Աշոտի Բաբաջանյանի, Վլադիմիր Գեորգիի Դավթյանի, Ռիմա Ավետիքի Գևորգյանի, Մարինե Գևորգի Ավետիսյանի, Լուսինե Վարդանի Բաղրամյանի, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանի, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանի, Աննա Սերյոժայի Միքայելյանի, Աննա Էդուարդի Կուրղինյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/3219/05/23 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/3219/05/23 գործն ըստ հայցի՝ Քնարիկ Աշոտի Բաբաջանյանի, Վլադիմիր Գեորգիի Դավթյանի, Ռիմա Ավետիքի Գևորգյանի, Մարինե Գևորգի Ավետիսյանի, Լուսինե Վարդանի Բաղրամյանի, Էլմիաննա Արտյոմի Հեքեքյանի, Գևորգ Խաչատուրի Գրիգորյանի, Աննա Սերյոժայի Միքայելյանի, Աննա Էդուարդի Կուրղինյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջների մասին», ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ